# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ԼԻԱՆԱ ԿԱՉՅԱՆՑ ՍՊԸ-ն ԻՀԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/27 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 8 | «ՋԱԲՈՏԱ ԼԱՅԹ» 750մլ | «ՋԱԲՈՏԱ ԼԱՅԹ» 750մլ | «ՋԱԲՈՏԱ ԼԱՅԹ» 750մլ | ՋԱԲՈՏԱԴԵՉ /ՌԴ/ | «ՋԱԲՈՏԱ ԼԱՅԹ» 750մլ: Որպես ազդող նյութ պարունակում է ալկիլդիմեթիլբենզիլամոնիումի քլորիդ (0,2%), պոլիհեքսամեթիլենգուանիդինի հիդրոքլորիդ (0,2%), N,N-բիս-(3-ամինոպրոպիլ) դոդեցիլամին (0,15%) , ինչպես նաև ոչ իոնոգեն մակերեսային ակտիվ նյութեր , մաշկը խոնավացնող և խնամող բաղադրիչներ, ֆունկցիոնալ հավելումներ, ապաիոնիզացված ջուր: Չի պարունակում սպիրտ: Միջոցն օժտված է հակամանրէային ակտիվությամբ գրամբացասական և |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | գրամդրական մանրէների (ներառյալ տուբերկուլոզի միկոբակտերիան՝ թեստավորված Mycobacterium terrae-ի վրա, բժշկական միջամտություններով պայմանավորված վարակների հարուցիչների՝ թեստավորված Pseudomonas aeruginosa, Staphylococcus aureus-ի վրա (մեթիցիլինկայուն, պենիցիլինկայուն և վանկոմիցինկայուն շտամների) , աղիքային վարակների՝ թեստավորված Escherichia coli, Salmonella typhimurium-ի վրա, հատուկ վտանգավոր վարակների՝ ժանտախտի, խոլերայի, տուլարեմիայի և այլ, լեգիոնելոզի հարուցիչները), վիրուսների (ներառյալ ռինովիրուսները, նորովիրուսները, ռոտավիրուսները, ադենովիրուսները, կորոնավիրուսները, «ատիպիկ թոքաբորբի» (SARS) վիրուսները, ընդերային և արտաընդերային հեպատիտները, այդ թվում՝ Ա, Բ, Ց, Ե հեպատիտի, պոլիոմիելիտի, Կոքսակի էնտերովիրուսները, ECHO, ՄԻԱՎ վիրուսները, գրիպի, այդ թվում՝ H1N1 և H5N1, պարագրիպի, |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | կարմրուկի վիրուսները, ՄՇՎՎ հարուցիչների, ցիտոմեգալովիրուսային վարակի, հերպեսի, Էբոլա և այլ վիրուսները), Կանդիդա, Տրիխոֆիտոն ցեղի սնկերի, դերմատոֆիտների և բորբոսասնկերի նկատմամբ: Միջոցն օժտված է երկարաձգված հակամանրէային ազդեցությամբ՝ առնվազն 6 ժամ: Միջոցն ակտիվորեն քայքայում է մակերեսների կենսաբանական թաղանթները, օժտված է լավ լվացող և ճարպազերծող հատկություններով, մշակումից հետո լվացում չի պահանջվում: Որպես ախտահանիչ միջոց՝ միջոցն օգտագործում են արագ ախտահանման և մաքրման համար՝ շփման և ոռոգման եղանակներով. Ախտահանիչ միջոցը նախատեսված է ինկուբատորների, կուվեզների, տրանսպորտային ինկուբատորների, անհասների և նորածինների համար նախատեսված վերակենդանացման բաց համակարգերի և վերակենդանացման համալիրների արագ ախտահանման, շենքերում ոչ շատ մեծ և դժվարհասանելի |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | մակերեսների, ապարատների և սարքավորումների (այդ թվում թոքերի արհեստական շնչառության ապարատների, անեսթեզիայի սարքավորումների) մակերեսների, օպտիկական սարքերի (այդ թվում գերձայնային հետազոտության տվիչների, ՈՒՁ հետազոտության ներդիտակների), անջրաթափանց ներքնակի ծածկոցների, ռետինե, պոլիպրոպիլենե և պլաստիկե գորգերի և այլնի (այդ թվում արյունով և այլ կենսաբանական արտադրություններով աղտոտված մակերեսների լվացման հետ համակցված) ախտահանման համար: Ունի ՀՀ ԱՆ հաստատված մեթոդական հրահանգ: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ЛИАНА КАЧЬЯНЦ ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԻՀԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/27 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 8 | | | | | |